ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<24 >> << հոկտեմբեր>> 2016 թ N 110

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱԼԲԵՐՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Ալբերտ Գևորգյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 24-ի N183 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը, 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N 01/14.1/6294-16 ծանուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի հոկտեմբերի 24-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Արինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ալբերտ Գևորգյանի հետ կնքած 2011 թվականի հոկտեմբերի 24-ի N183 աշխատանքային պայմանագիրը:
2. 2016 թվականի հոկտեմբերի 24-ից Ալբերտ Գևորգյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Արինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 08907717 ԵՐԵՎԱՆ

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ